ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՕՇԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Հասցեն՝ գ.Օշական Մ.Մաշտոցի փ. 105
հեռ. 091-45-94-83

address: vil. Oshakan M.Mashtots st. 105
cell phone 091-45-94-83

N1

09/01/2017թ.

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ. ԳՅՈՉԱԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գյոզալյան

Կից Ձեզ ենք ներկայացնում Օշական համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 27-ի հերթական նիստով ընդունած թիվ 35,36,37,38 և 39 որոշումները:

Առդիր 11 էջ:

Invalid signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 35

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան

Օշական գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել համայնքի ավագանու թիվ 12 նիստի օրակարգը՝բաղկացած հետևյալ հարցերից

1.ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ
2.ՕՇԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3.ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ
4.ՀՐԱՅՐ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՁԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 36

ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016Թ. ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 29-րդ կետով

Համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Օշականի համայնքապետարանում և համայնքի ենթակա ՀՈԱԿ-ներում գույքագրման հանձնաժողովի կողմից ներկայացրած 2016 թվականի փաստաթղթերը:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 37

ՕՇԱԿԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 19-րդ կետով.

Օշական գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Օշական գյուղական համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող հետևյալ դրույքաչափերը՝

1.Օշական գյուղական համայնքի երաժշտական դպրոց հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. սահմանել ամսական ուսման վարձը	3000դրամ
2.Օշական գյուղական համայնքի մ/մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. օրական սննդի համար վարձը սահմանել 2/1.Ընտանիքից մ/մանկապարտեզ հաճախող երեք երեխաներից մեկ երեխայի ամսական վարձը չգանձել:	300դրամ
3.Օշական գյուղական համայնքի մշակույթի տուն՝ պարի խմբակներ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար 2017թ. սահմանել ամսական վարձը	3000դրամ

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 38

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և տեղական վճարների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 74-րդ հոդվածով

Օշական գյուղական համայնքի ավագանին որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնքում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ.

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հիսուն հազար դրամ.

-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ,

- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հինգ հազար դրամ:

2) համայնքի վարչական տարածքում գոյությունունեցողշենքերիևշինություններիվերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացմանևբարեկարգմանաշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ հինգ հազար դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնայինհամայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ

ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ.

9) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել 2500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 10100 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 13100 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 20100 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 25100 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 45100 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև տաս հազար մեկ դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 2500 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 13100 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել 20100 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 25100 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել՝ 45100 դրամ.

10) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ.

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ.

12) համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 3000 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5100 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10100 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 20100 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 30100 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 500 դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1100 դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2100 դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4100 դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8100 դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15100 դրամ.

13) քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար. օրացուցային տարվա համար՝ հինգ հազար դրամ.

14) ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ.

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ.

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ.
դ. այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝համայնքի վարչական տարածքում այլարտաքինգովազդտեղադրելութույլտվությանհամարսահմանվածտուրքի 25 %-իչափով.

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխելևտարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով:

15) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

16) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տաս հազար դրամ.

17) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուրհազար դրամ:

18) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տաս միլիոն դրամ:

Տեղական վճարների դրույքաչափերը

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնքում սահմանվում են տեղական վճարների հետևյալ դրույքաչափերը՝

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշ խատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելո ւ համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող,բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդթվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդի ականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրմանձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 0 դրամ

3 ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 0 դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 0 դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 1000 դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար 2000 դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում.

9) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

10) ջրմուղ-կոյուղու համար այն համայնքներում, որոնք ներառված չեն ջրմուղ-կոյուղու ծառայություններ մատուցող օպերատոր կազմակերպությունների սպասարկման տարածքներում, մասնավորապես՝ ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

11) ոռոգման ջրի մատակարարման համար այն համայնքներում, որոնք ներառված չեն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ստեղծված ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքներում՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով, բացառությամբ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն սահմանված հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտներում սակագների սահմանման դեպքերի.

12) համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

13) համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

14) համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

15) համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար.

16) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով.

17) համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ՝ բակայինտարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների)
ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար՝ «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դրույքաչափերի սահմաններում հաստատվում է համայնքի ավագանու կողմից.

18)համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար մինչև հազար դրամ փոխհատուցման վճար 0 դրամ:

2.Անվավեր ճանաչել Օշական համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 16-ի արտահերթ նիստով ընդունած 34 որոշումը:

Կողմ -6 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՕՇԱԿԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Օշական համայնք
ՀՀ, Արագածոտնի մարզ, գ.Օշական, (091)459483, (091)341124, oshakan.aragatsotn@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2016թվականի N 39

ՕՇԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀՐԱՅՐ ՎԱՐԴԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՐՑԸ

Հիմք ընդունելով Հրայր Ավետիսյանի դիմումը և ղեկավարվելով <<Գույքահարկի մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով

Օշական համայնքի ավագանին որոշում է՝

Ջիջել Օշական գյուղի բնակիչ Հրայր Ավետիսյանին պատկանող /MERCEDES-BENZ մակնիշի, 35 UV 059 պետհամարանիշի/ ավտոմեքենայի գույքահարկը՝ 20000 ՀՀ դրամի չափով:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՅԿ
2. ԱԴԱՄՅԱՆ ՄԱՐԱՏ
3. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ՍՊԱՐՏԱԿ
4. ՆԵՐՍԻՍՅԱՆ ՀԱՅԿ
5. ՍԱՐԳՍՅԱՆ ՀԵԿՏՈՐ
6. ՍՄԲԱՏՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆ**